



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի մայիսի 27-ին ժամը 17:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ երկրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 14 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Մարիամ Պողոսյանը, համայնքի ղեկավարի օգնական Սոնա Մաթևոսյանը, իրավաբանական բաժնի պետ Կ. Եսայանը, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Քալաշյանը և համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի մայիսի 27-ի արտահերթ երկրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ ՀԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՄԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՆԵԼԼԻ ՍՏԵՓԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՎԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 102 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հաշվեկշիռները հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 103 որոշումը:

Նիստին ներկայացավ ավագանու անդամ Գոհար Նիկողոսյանը: Նիստը շարունակվեց:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքը ընդունելու և դուրսգրման ենթակա գույքի կազմը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Հարցի վերաբերյալ որոշ մեկնաբանություններ ներկայացրեց համայնքի ղեկավարը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 15 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 104 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դ. Գասպարյանը:

Ներկայացնելով Նելլի Ստեփանի Ավագանին ֆինանսական օգնություն հատկացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 15 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 105 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: